

# ՄՐՐԿԻ ՍՈՒՐԲԸ

## XX

Աշնանային մռայլ, խեղդող գիշեր էր, որ մի մասնախոտ օրից յետոյ առանց վերջալուսի իջաւ Գայլաւառայ լճի և շրջակայքի վրայ։ Գսպէի ջրաղացն իր ծեր տիրոջ հետ նախ կծկուեց այդ թանձր խաւարի մէջ, ապա կարծես երկիւղից մաշուեց, չքացաւ։ Ամենասրատես աչքն անգամ չէր կարող նրա ու զանգուածը որոշել մռայլ ամայութեան մէջ։ միայն նեղիկ լուսամուտից դեռ թարթում էր ճրագի լոյսը, համատարած լուսութեան խաւարի վրայ հսկող միակ աչքը, կեանքից ու կենդանութիւնից խօսող միակ նշանը։

Դեռ առաւօտից սկսուած անձրել շարունակում էր, և այժմ խաւարի հետ նրա մանրամաղ կաթիներն իջնում էին երկնքից ու, խեղդող հոգսերի պէս, միաւկերպ, անվերջ, ասես էլ երբէք չը դադարելու համար։ Զուր, ջուր էր բոնել ջրաղացի չորս կողմը, ջուր վերեից, ջուր ներքեւից, և բոլորը միասին ողողում էին փոքրիկ շենքի խղճուկ պատերը, լիդում, քերում էին նըրան կացաց-կամաց։ Գսպէն անհանգիստ էր, ցերեկով նա մի քանի անգամ արդէն դիտել էր ջրաղացի յետեկ ամբարդակները, բայց և այնպէս ուշ երեկոյեան նա նո-

\*.) Տես «Մուլճ» № 6:

րից դուրս եկաւ, անձրեխ տակ, յեխերի միջից երերաւլով գնաց դէպի նաւը. ծեր աչքերով փորձում էր դիտել կազմուածքի ամրութիւնը, ոտքով խփում էր այս կամ այն կողմը՝ ձայնից հասկանալու համար, թէ որքան հաստատ է թումբը.

Վերջին անգամ նա վերադարձաւ ջրաղացի յետեւից՝ սիրան անորոշ սարսափով բռնուած։ Այնտեղ՝ խաւարի մէջ նա մարդկային ոտնաձայն լսեց. նրան թւաց, թէ մէկն իր երեւալուն պէս շտապով հեռացաւ ամբարդակի վրայից և կորաւ ուռիների տակ։ Թով կարող էր լինել. խէրով, անվասա մարդն այս չար գիշերին, անձը բեկի տակ, սարսափելի խաւարի մէջ ինչ գործ ունէր։ Միենոյն ժամանակ բուն հեռուից սկսեց իր «վուշվոն»։ Գոպէն բարւոք համարեց շտապով յետ գալ և ջրաղացի դուռը ներսից պինդ փակել։ Սակայն նա չը հանգըստացաւ, կանգնած մնաց իր տեղում՝ հետևով, ականջը ձայնի։ Փառը գառնում էր, չաղչակն անընդհատ չըխկչակում, ջրաղացը որոտում էր, բայց և այնպէս Գոպէն ին թւաց, թէ նորից լսում է նոյն ոտնաձայնը, այժմ աւելի մօտ, հէնց ամբարդակի վրայ, հէնց ջրաղացի պատի տակ, դրան առաջ։

Նոյն իսկ մի մարդու ոտնաձայն չէ, այլ շատերի, երկու, հինգ, տաս, քսան... Տէ՛ր Աստուած։

—Վուշվու, վուշվու...

Գոպէն մօտեցաւ, չաղչակը բարձրացրեց, որ կարուղանայ աւելի լաւ լսել. ոչ, դբում միայն մի մարդ էր, ահա նա անցաւ ջրաղացի յետեւը, ահա բարձրացաւ ամբարդակի վրայ։ Գուցէ և մարդ չէ, այլ գազան, մտածեց Գոպէն, չաղչակը ձեռքից թողեց քարի վրայ, գնաց իր անկիւնում կծկուեց։ Վերջին միտքը նրան թւաց այնքան հաւանական, որ նա նոյն իսկ իր նախկին երկիւղը ծիծաղելի համարեց։ Բայց նոյն վայրկենին՝ հէնց ամբարդակի վրայից նա մի թրմփոց լսեց, ոտքի թռաւ. կրկին չաղչակը լոեցրեց, ականջները որեց՝ ամբողջապէս

լողութիւն դարձած, բայց իզնւր, այլևս ոչ մի ձայն։  
Գսպէն կրկին նստեց իր տեղում։

—Վու-վճւ, վու-վճւ...

—Ա՛խ, անիծած բայդուշ, մռմռաց նա ատամների  
արանքից։

Զը գուրս գալ արգեօք, մտածեց Գսպէն, բայց վա-  
խենում էր. այն հազւագիւտ գիշերներից մէկն էր,  
երբ ջրաղացում ոչ ոք չը կար գիշերից։ Այնուամենայնիւ  
նա վերցրեց կացինը, մօտեցաւ դրանը, զգուշութեամբ  
բաց արեց և գուրս եկաւ։ Առանց աղմուկի անցաւ ջը-  
րաղացի յետեւը, նայեց, խաւարի մէջ նա ոչինչ չը նըշ-  
մարեց, բայց կրկին լսեց նոյն ոտնաձայնը... մէկը փա-  
խաւ և անյայտացաւ ուսուիների տակ թանձր. մթու-  
թեան մէջ։ Քաղցած գայլ է, մտածեց Գսպէն և յետ  
եկաւ, ներս մտաւ ջրաղաց, գուռը վերստին խնամքով  
փակեց, ճրագին նայեց, ձէթը քիչ թւաց, միաք չ'ունէր  
քնելու, տարաւ ձէթ աւելացրեց, որ անընդհատ վա-  
ռուի մինչև լուսաբաց, ապա դնաց կծկուեց անկիւնում։

Եւ գրսում անձրեւը մաղում էր անընդհատ, և նրա  
ճղփիւնը ջրտան միակերպ որոտի հետ դառնում էր նիր-  
հեցուցիչ։ Ոտնաձայնն էլ չէր լսում. Գսպէն հանգըս-  
տացաւ, այժմ նա համոզուեց, որ քիչ առաջ գրսում  
քայլողը գաղան էր և իր երեալով թողեց հեռացաւ։  
Քարը գառնում էր՝ շուրջն սպիտակ ալիւր փչելով, չաղ-  
չակը ցատկրտում, ճրագը, հին օրերի այդ սեացած  
փռքրիկ կտուցաւոր ճրագը պլպլում էր մի հատիկ ծուռ  
սիւնից՝ երերուն ստուեր կազմելով։ Այդ ստուերը... նա  
էլ Գսպէի ընկերն էր, տարիների ընկերը։ Գսպէն վաղուց  
ուսումնասիրել էր նրան բոլոր մանրամասնութեամբ։  
Սիւնը կենարոնում մի ուսուցիկ հանգոյց ունէր,  
ստուերի մէջ այդ հանգոյցն ուղտի սապատի ձևով  
ընկնում էր միշտ քարի աջ շրթունքին։ Նրանից  
վար սովորաբար կախուած էր լինում հացի պար-  
կը՝ միներից ազատ մնալու համար։ Գսպէն լսւ յիշում  
է, որ պարկի ստուերն ընկնում էր սկզբում չաղակի

վրայ, այդ նրան գուր չեկաւ, կուզէր միշտ տեսնել փայտեայ այդ փոքրիկ լեզուակը, որ առես խօսում էր իր տիրոջ հետ, ուստի Գոպէն պարկի տեղը փոխեց: Ծերունին նայում էր այժմ սեանը և ստուերին և ինքն էլ չիմանալով ինչու՝ յիշում էր այս բոլոր մանրամասն ութիւնները: Ամենից շատ նրան այսօր հետաքրքրում էր թանձր փոշով ծածկուած այս կօր սիւնը: Գոպէն թւում էր, թէ նա էլ իր պէս ծերացել, կոացել է տարինների ծանրութեան տակ, նա էլ իր պէս ճերմակել, ալեզարդ է գարձել: Քանի տարի է, ինչ միասին են Գոպէն և այն սիւնը: Մէկը յոդնել է կեանքից, իսկ միւսը ջրաղացի ծանրութիւնից, և գեռ կրում են իրանց բեռը:

Նատ գիշեր անցաւ: Կէս քուն կէս արթուն Գըսպէն իր նստած տեղում նղղում էր, երբ յանկարծ չաղչ չակը կանգ առաւ և ջրաղացի յետևից լսուեց մի ահազգին հարուած: Եէնքն ամբողջապէս ցնցուեց ասես երկը րաշարժից, սիւնը երերաց իր ստուերի պէս, գեօլչագը կախուած տեղից գուրս թռաւ, երկու քարերն իրար զարկուեցին ահազին շրիկոցով, և ծերունին սարսափած՝ հաղիւ կարողացաւ վաղել և գուռը բաց անել: Գրսից լսում էր ահուելի որոտ, ամբարդակն ամբողջապէս փուլ եկաւ, նաւը պոկուեց և ահազին թափով զարկուեց ջրաղացի հիմքին, ջրտունը քարուքանդ եղաւ, ջրերը հեղեղեցին ամեն ինչ: Դրան առաջ դողդուղալով կանգնած՝ ծերունին տեսաւ, թէ ինչպէս քարերը դողդուցով կուլ գնացին, ջրտան վրայ յատակը երերաց, ծոճուռեց ու փլաւ միանգամից, կօր սիւնը ճռնչաց ցաւով, երկուտակ ծալուեց, կտուրն իջաւ, ճրագը մաքեց, խաւարի մէջ լսուեց ջրերի որոտն աւելի ուժգին, աւելի ահաւոր: Գոպէն վախաւ աւելի հեռու, նայում էր և էլ չը գիտէր, ուր է ինքը, ինչ է կատարւում իր շուրջը, քնած է, թէ արթուն, բոլորը երազ է, թէ իրականութիւն: Իսկ այնտեղ, ջրաղացի յետեսում ահազին ամբարդակը քանդում էր հաջանից, հեղեղ

Էր գալիս, կարծես Գայլատուայ լիճն ամբողջապէս թափ առած՝ վազում էր այս ողորմելի շէնքի վրայ, մռմռաւ լով, լիզերով աւերում էր անողորմ կերպով։ Զրտան անցըլ նեղ էր ջրերի ահագին քանակութիւնը պարտկելու համար, ալիքները բարձրացան, փրփրուն ու կատաղի, նրանց միահամուռ թափի տակ ջրազացի յետեկի պատը ծռուեց, կախուեց և ընկաւ որոտով։ Նաւն ու փառը, չաղչակը, պատերն ու ամբարդակն իրար խառնուեցին, և ալիքները մոնչալով առան այդ բոլորն ու առաջ քշեցին։ Գոզէն չէր տեսնում այդ, միայն լսում էր խլացուցիչ որոտը և գգում էր աւերածի բոլոր սարսափը։ Քառասուն տարուայ նրա գոյութիւնը փլչում էր այդ սարսափելի գեղերին, քառասուն տարուայ նրա կեանքը մասսմաս գնում էր ալիքների հետ։ Վտանգի մեծութիւնը մոռացած՝ նա մի վայրկեան նետուեց գէպի ամբարդակը, նրան թւում էր, թէ մի բան կարելի է անել, մի անցք փակել, մի քար դլորել, մի թումի պնդացնել. վազեց և կանգ առաւ քարացած, ամբարդակի տեղ բացուած էր մի ահագին վիճ, ու սարսափելի, ուր տարերային թափով ալիքները մղում էին իրար աւերածի անյագուդ կատալութեամբ, շրփում, ոռնում և խաւարի մէջ վայրիլում մի տեսակ մութ մահասառսուռ խորհրդաւորութեամբ։ Խոկ ջրազացի տեղ երեսում էր միայն մի լայն ջրանցք, որի երկու կողմերում դեռ բարձրանում էին պատերի երկու խղճուկ կտորներ, ասես աւերածի սարսափը կատարեալ գարձնելու համար։ Զարդուած, յուսահատ ծերունին երեսը գէպի գիւղը գարձը եց և որպէս մի յետին փորձ՝ բոլոր ութով կանչեց.

— Օգնութիւն...

Զայնը տարածուեց ամայութեան ու խաւարի մէջ և անպատասխան մեռաւ հեռուում, և յանկարծ բոլորովին մօտիկ, ուռիների տակից լսուեց մի բարձրածայն քըրքջոց, մի գիւղին ծիծաղ, որ կարծես հեղնում էր օդնութիւն աղազակող մենաւոր ծերունուն, հեղնում էր նրա մեծ ցաւը։ Գոզէն լսեց այդ քրթիջը և իր գժրադ-

դութիւնը մոռացած վայրկենապէս՝ բոլոր ուշադիում  
թիւնը գէպի նա դարձրեց.

— 0 գնութիւն...

Քրքջոցը կրկնուեց աւելի մօտ, աւելի չոր ու դը-  
ժոխային։ Գսպէն լսեց, ճանաչեց այդ ձայնը, ցնցուեց  
և այս անգամ օգնութեան փոխարէն կատաղաբար  
ճչաց.

— 0՝, անողորմ:

Նաւօն. Էր... Գսպէի ոխերիմ թշնամին, ծեր ձըկ-  
նորսը։ Գսպէն յիշեց բոլորը, յիշեց նրա սպառնալիքը  
Շողերի մահուան օրը, յիշեց գիշերը լսուած ոտնաձայ-  
ները, յիշեց ու հասկացաւ... Նաւօն վրէժինդիլ եղաւ,  
իր խելագարութեան մէջ բոլոր զայրոյթը թափեց Գսպէի  
վրայ։ Ամբարդակը նա էր քանդել, ինչպէս և' գիւղի գէ-  
զերը նա էր հրդեհում, ցերեկը լժի վրայ, ալիքների հետ մի  
անվերջ, անխորհուրդ պայքարի մէջ, գիշերը սարսափե-  
լի ծերունին գուրս էր ընկնում որպէս մի չար ոգի և  
մահ ու աւերած սփռում իր շուրջը։ Նրա խախտուած  
գլխում ամեն ինչ տակն ու վրայ ու այլանդակ, մի  
միաք սակայն մնում էր պարզ ու որոշ, քանդել,  
քանդել, քանդել... իսկ փշրուած սրտում բուռն ատե-  
լութեան զգացմունք գէպի աշխարհը, մարդիկ, և նա  
քանդում էր...

Գսպէն նետուեց գէպի ուռիները, որտեղից լսուում  
էր այն գիւային քրքիջը, որտեղ ծածկուած էր իր զար-  
հուրելի ախոյեանը։ Այս անգամ Նաւօն չը փախաւ, նա  
յենուած էր ծառին և նայում էր մթութեան մէջ իր  
գայլային աչքերով։ Գսպէն բռունցքները սղմած՝ բոլորո-  
վին մօտեցաւ. երկու ախոյեաններն այժմ գէմառդէմ  
էին, խաւարի մէջ երկսի աչքերն էլ փայլում էին, և  
տաք շնչերն այրում երեսները փոխադաբար.

— Դու ես, դու, ես այդ գիտեմ, անաստուած,  
մոնչաց Գսպէն, ես տեսնում եմ քո գիւային աչքերը,  
ճանաչեցի անիրաւ ձայնդ, աւերիշ, մարդառպան...

Պատասխանի փոխարէն Նաւօն միայն քրքջաց. այդ-

սարսափելի ծիծաղն խսպառ զինաթափ արեց Գոպէին,  
նա զգաց, որ իր առաջ կանդնած է մի խելագար, յետշետ  
քաշուեց, մինչդեռ նաւօն շարժուեց և վազէվազ անյայ-  
տացաւ: Հեռուից դեռ երկար լսում էր նրա ծիծաղը,  
մինչդեռ Գոպէն գնաց դէպի ջրաղացի աւերակը, կի-  
սափուլ պատի տակ ծեր գլուխը ձեռների մէջ առաւ  
և հեկեկաց, դառն արցունքները թափուեցին մարած  
աչքերից, նա էլ ոչ տուն ունէր, ոչ գլուխ գնելու տեղ,  
այժմ բոլորովին մենակ, բոլորովին անտէր էր ծեր ջրա-  
ղացպանը: Եւ նա լալիս էր երկար, երկար իր բնի, իր  
ջրաղացի աւերածը, և բուն վերեկից վայում էր նրա  
հետ.

—ՎՌԵՎՓՆ, ՎՌԵՎՓՆ, ՎՌԵՎՓՆ...

Լոյսը բացուեց: Գոպէն վերկացաւ, մէկ էլ նայեց  
աւերածին և ինքն իրան զարմացաւ, որ այդ բոլորից  
յետոյ ինքը դեռ ապրում է: «Ո՞ւր փախայ և ինչու  
համար, մտածում էր նա, լաւ չէր լինի, եթէ կտուրն  
այս անիծուած դլիսիս իջնէր և տանջուած մարմինս ջր-  
բերի մէջ թազէր, այսուհետեւ ուր գնամ:.. ում դուռը  
թակեմ՝ մի անկիւն, մի կտոր հաց մուրալու...»

Նա քայլում էր ձեռքը ծոցը, դլիսաբաց և աչքերը  
գետին յառած. յանկարծ նա կանգ առաւ, և դառն  
ժպիտ խաղաց ծեր շրթունքներին. նա իր ստքերի տակ  
տեսաւ չաղչակը, որ ջուրը դուրս էր ձգել ափը: Բաղ-  
դի գառն հեգնութիւն, ջրաղացից էլ ոչինչ չը կար, ոչ  
փառ, ոչ քար, ոչ նաւ, բայց մնացել էր այս չաղչակը,  
փայտի այս ողորմելի կտորը՝ որպէս մի կիզիչ յեշողու-  
թիւն իր մեծ դժբաղդութեան:

Իր ջրաղացի փառքի և դժբաղդութեան հետ կա-  
պուած փայտի փոքրիկ կտորն այնուամենայնիւ թանգ էր  
նրա համար, ուստի կռացաւ վերցրեց և խաղացնում  
էր ձեռքի մէջ, նայում էր զանազան կողմերից, շը-  
թունքները շարժում էին, կամացուկ խօսում էր նրա  
հետ: Յետ դարձաւ, դէպի ուռենիները դիմեց, այսեղ,  
ուր գիշերը հնչւում էր նաւօի քրքջոցը, ուր վայում էր

բուն: Սաւադին հասնելով նա կանգ առաւ մի վայրուկեան, նայեց ու մռմռաց ատամների արանքից.

—Անիբառւ, խելագար...

Նաւօն ինսամքով փակել էր սաւաղը և բոլոր ջրերը դէպի ջրաղացը մղել՝ ամբարդակը քանդելու համար:

Դապէն շարունակեց ճանապարհը դանդաղութեամբ և միևնուն ժամանակ ուշիուշով նայում էր ծառերին. նա կարծես փնտրում էր մէկին:

—Կը գտնեմ, կը գտնեմ քեզ, մռմռում էր նա:

Այսքան շարիքի, այսքան գժբաղգութեան փոխարէն նա էլ մէկին պէտք ունէր՝ իր վրէժինդրութեան թոյնը նրա գլխին թափելու, որ դոնէ սիրտը մի փոքր հովանար, և այդ մէկը բուն էր, այն շարագուշակ բայդուշը: Այն օրուանից, որ այդ անիրաւ թռչունը սաւառնում էր ուռիների և ջրաղացի վրայ, շարիքը Գոպէից չէր հեռանում: Ասօն, Շողերը, Նաւօն փոթորկութերած ճակատագրով և սրանց բոլորի վրայ բուն, նրա փուշ-փույը:

—Կը գտնեմ, կը գտնեմ քեզ, անիրաւ, կրկնում էր նա՝ մտածելով անցեալի մասին:

Եւ գտաւ:

Ծեր բազուկի բոլոր թափով նետեց չաղչակը դէպի վեր, դէպի ուռենին, և սգաւոր թռչունը թրպրաւալով ընկաւ նրա ոտների տակ: Դապէն կատաղաբար վրայ պըծաւ, բռնեց ոտներից, բարձրացրեց վեր և խելագարի պէս ճօճում էր թռչունին օդի մէջ, ապա բոլոր ոյժով խփեց գետնին բուի արիւնաւթաթախ ու ջախջախուած դիակը: Թռչունը մի վերջին վային արձակեց և մեռաւ: Գոպէն կրկնին մօտեցաւ և նայում էր արիւնոտ մսի այդ այլանդակ կտորին, որ ընկած էր իր ոտների առաջ:

—Վայի, գէ, վայի, անիրաւ, բացականչեց նա, ապա վշտից խենթացածի պէս քայլեց թռչունի դիակի վրայ, ոտներով հարուածում, արորում էր: Ուկորները բաժա-

նուեցին իրարից, փետուրները ցաք ու ցրիւ եկան, բայց կատաղած ծերունին՝ մազերն արձակ, միրուքը խճճուած, աչքերը սարսափելի՝ դեռ շարունակում էր հարուածել ու արորել: Երբ նա ուշքի եկաւ, ոտների տակ էլ ոչինչ չը կար բացի մի երկու կտոր ոսկորից և մի քանի խղճուկ փետուրներից: Գոպէն նայեց երկար-երկար, գէմքը ծածկեց և հեկեկալով փախաւ հեռւ-ու-հեռու աւերակ ջրալացից և իր ձեռքով բղկտուած, ճիմուած բուից: Երկուսն էլ սարսափելի էին, երկուսն էլ անդառնալի, մէկը նաւօն արեց, միւսն ինքը՝ Գըս-պէն: Ինչու, ինչու... պատասխան չը կար, ուխտաւոր-ներն ասում էին, թէ աշխարհում որ կողմը նայես, մէ-կը միւսի ճակատագիրն է:

Եւ ծերունին քայլում էր անընդհատ...

Գոպէն գիւղը չը մտաւ, այլ դաշտերով ու ձորե-րով ամբողջ օրը թափառեց և երեկոյեան գէմյոգնած, ուժասպառ հասաւ Մըրկի սրբի բլրին: Այստեղ աննը-պատակ չ'եկաւ նա: կ'ուղէր էլի մի անդամ տեսնել խաչքարը և վերջին անդամ հարցնել, թէ ինչու է այս բոլորն այսպէս: Նա կ'ուղէր իր ամբողջ կեանքը փոել նահատակի առաջ և հարցնել, թէ ինչ անուն ունի այն: Զէ որ ինքը հաւատում էր... Հարցնել, իմանալ այդ բոլորը, և յետոյ ինչ ուզում է՝ թաղ լինի, ամեն ինչ վերջացած է:

Արել ծածկուեց սարերի յետեռում, լուսինը բարձրացաւ Պայազէտի կողմից Բարդողեան լեռների թիւ-կունքից և ահագին ստուերներ շինեց բլուրներից ու բարձր լեռնակատարներից: Ծերունին քայլում էր լեռ-նային արահետով, մերթ նստում հանգստանում էր մի քարի վրայ, ապա կըկին շարունակում ճանապարհը: Վերելքը քանի գնում գժուարանում էր, տեղտեղ ժայռեր ու մացառներ փակում էին նրա առաջը, Գըս-պէն չանդռելով, սողալով պտոյա էր գործում ու կըկին

բարձրանում։ Քնած էր շրջակայքը, լեռնային հօվլ էր փշում սլալալով, ցուրտ էր. բայց ծերունին բարձրանում էր անընդհատ, նա պէտք է խօսէր սրբին և յետոյ... անդունդներն ու բարձրաբերձ ժայռերը. շատ էին նրա չորս կողմում, մի մաշուած կեանք ամեն տեղ կարելի է թաղել, մտածում էր նա։

**Մօտ էր կատարը։**

Հեռուից երեռում էր արդէն հսկայ խաչքարը՝ թևերը վեհօրէն տարածած աշխարհի վրայ, որպէս իր ոտների տակ ծնկաչոք փռուած ժողովրդի գլխին աղօթող ծեր անապատական։ Նրա ստուերը կախուել էր կատարից, և ծերունին մի սրբազն երկիւզով բռնուած՝ նայում էր այդ նուիրական ստուերին, որ կարծես ցած էր կախուել իմանալու, լսելու համար, թէ ինչ է կատարւում ներքեսում աշխարհի վրայ։ Գոպէն նայում էր և էլ քայլել չէր կարսղանում. նրան սարսափելի էր թւում գիշերով հասնել այնտեղ, ուր իշխում էր մի երկնային գաղտնիք, որ արարածների բաղդերը շալակած իր մութ ծալքերում խաղում է անհունութեան մէջ։ Գոպէն դողում էր։ Ցերեկով այսպէս չէր։ Այժմ կարծես սուրբ ճգնաւորն ինքն ալօթում է այն խաչի յետեսում ու ասում է զարմանալի բաներ։ Լուսինը վայրում էր՝ պաղ ճաճանչներով, նրա արծաթագոյն լոյսի միապաղալ ցոլքերի մէջ լեռ ու դաշտ շօղում էր և ամեն ինչ՝ արծաթէ քօղ իջած վրան՝ փսփսում էր այն խաչի հետ։ Կատարը՝ ուր ցցուած էր խաչքարը, ուռչում, բարձրանում էր և կարծես ձգւում էր վերև համբուրուելու լուսնի հետ։ Ծերունուն թւում էր, թէ այստեղ, այս նուիրական վայրում ամեն ինչ խօսում է, քամին փսփսում է քարերի հետ, մացաները՝ լուսնի շողերի հետ, խաչքարը՝ ճգնաւորի հետ, և ամենքը միասին նայում են վերև, ուր աստղերը թարթում են մեղմիւ, ուր երկինքը յօրանջում է վեհօրէն։

Լուսինը բարձրացաւ աւելի վեր, նա արդէն խաչքարի կատարին էր, և Գոպէն զարմանքով տեսաւ, որ

նրա շուրջը կարմիր բակ կար: Զար նշան, նա էլ է խօսսում ցաւից ու արիւնից, մտածեց ծերունին: Երկնքի պատկերը համապատասխանում էր նրա սրտին: Ծերունին լնկճուեց, այնուամենայնիւ պէտք էր բարձրանալ, նա իր վերջն ժամերն էր քաշում դէպի վեր, նա իր վախճանն էր փնտրում այս խորհրդաւոր վայրերում: Շարժուեց տեղից և իսկոյն կանգ առաւ, խաչքարի շուրջը մէկը միւտի յետեւեց յանկարծ կարծես գետնից բուսներով շարուեցին տարօրինակ մարդկային ստուերներ, մէկը մէկից մեծ, մէկը մէկից սարսափելի: Ո՞վքեր են: Լուսնի շողերի տակ նրանք գալարւում, ձգւում, մեծանում, ապա կազմում են մի երկար շարք: Լուռ են: Ահա կանգնեց մէկը, ըստ երեսոյթին մի ծերունի, բարձրահասակ ու յաղթանդամ և դարձաւ միւսներին.

—Մի տրտնջաք, զաւակներս, յոգնած ենք, տանջուած ենք ու քաղցած, բայց մեր ճակատագիրն ունեցող մարդիկ ուրիշ կերպ լինել չեն կարող: Վանահայրը մեր առաջ ֆակեց վանքի դռները, դիւզը մեզ մերժեց մի անկիւն ու մի կտոր հաց—ցասման ժամից առաջ վճռել են արդար մնալ—ծերունու հիւրասէր ջրաղացն էլ աւերակ դտանկք: Հարթավայրի վրայ ամենքը տեղ ունեն, գազանները լեռների այլերում ու խոռոչներում որջ ունեն, իսկ մենք թառում ենք լեռների կատարներին, մենք նզովուածներ ենք, ասում են՝ մեր ոտներին կապուած են անէծքն ու աւերածը: Այս խաչքարը մի հին աւերածի նշան է, բայց մենք ճգնաւորներ չենք, այլ նզովուածներ բոլոր նրանց համար, որոնք լիզում են հին մարտապատ քարերը: Ուխտաւորներ էինք, մեզ դարձրին դիշերային դևեր:

—Մենք նզովուածներ ենք, ասացին մի քանի ձայներ. աւաղակներն անէծքի ծնունդ են, ուխտաւորներ էինք, մեզ դևեր դարձրին, և մենք կը քրքջանք այժմ դևերի հետ տանջուած ու քաղցած, թող այդպէս լինի:

—Մրրիկը մօտենում է, շարունակեց առաջինը, նայեցէք, ահա լուսնի շուրջն արիւնը բակ է կապել. մենք

մեղաւոր չենք, լուսինն աւազակ չէ, բայց ճակատին աշբան պսակ ունի, ով ստիպեց նրան արիւնը զարդ ընտրել այս լեռներով անցնելիս... Մըրիկը մօտենում է, իսկ մենք լեռների կատարին ենք թառել, ով էր տեսել ուխտաւորների երեսին փակուէին գուները։ Հարթավայրը տափակ է, նա խլէզի պէս դետնին է կաջում, երբ զարկում է մրրիկը, և լիզում է մամռապատ քարերը. մեր ճակատը մենք առւել ենք սարսափելի հովերին, ի՞նչ մեղաւոր ենք, մի՛թէ լեռների արգանդից մենք նըղվիքի երկոներով գուրս վիժուեցինք, կամ գուցէ մեր հայեացքից առաջին անգամ արիւնոտ լուսինը թարթեց, ու ձորերն իրանց խոռոշներում քարգարի զարկեցին ու կայծեր տուին։ Մենք մերժուածներ ենք, բայց մեղաւորներ չենք, երբ երկնքում լուսինն էլ արիւնն է ընտրել իր ճակատին պսակ, իսկ մեռելները հողի տակ նրագեցկութիւնով հմայուած՝ ոսկորէ թաթերով ծափ են տալիս ու հրճում այս զարմանալի երկրում։

—Մենք մեղաւոր չենք, որ լուսինը արիւնէ պսակ ունի, կրկնեցին նախկին հայները։

—Լսեցիք, այսօր վարդապետն ասաց, որ այս աշխարհը երկնքի հովանու տակն է։ Ամեն անգամ, երբ մրրիկն է բռնում այս կողմերում, սուրբը գալիս է ամպերի հետ, կախում է այս խաչքարի թևերից, լալիս է, լալիս, և նրա հետ միասին լալիս է ամբողջ աշխարհը։ Եկեղեցիների կատարներից զանդակները բերանաբաց ու յուսահատ ողբում են, հարթավայրը տափականում է, մինչև փոթորիկն անցնի։ Մի ժամանակ եղել է գուցէ, երբ սրբի լացով ու զանդակների մրմունչով մրրիկն անցել է, երբ այս խաչքարի ու երկնքի մէջ ճանապարհը բաց է եղել գողղողացող սրտերի համար, բայց այժմ լուսինն իր կարմիր պսակով փակել է սրբի ճանապարհը, և մրրիկը չի անցնի, նա մշտական է, ահաւոր, աւերիչ։

—Մըրիկը կը գոյ ահաւոր ու աւերիչ, հայն տուեցմի ուրիշը, բայց սուրբը չի դայ. աշխարհում ամեն բան

փոխուել է։ Մենք էլ մեզ համար մեր սուրբն ունենք. մրրկի ժամանակ տղամարդի լայն կուրծքն ու մոլորուած գնդակը եղբայրներ են։ Մերժուած ու հալածուած ուխտաւորներ ենք, բայց կը ժպտանք լուսնի արիւնոտ պսակին, մենք մրրկի զաւակներ ենք դարձել՝ նզովքի երգը շրթունքներիս...

— Է՞՞ն, դուք նզովեցէք մրրիկն ու ժպտացէք լուսնին, իսկ Ապրօն այստեղ իր պատանը կը փռի և վրան կը պառկի հանգստանալու, մինչեւ Ասօն հաց բերի գիւղից։ Վալադն ամենից շատ է յոգնում, այնպէս չե, ընկերներ։

Խօսողն Ապրօն էր, Գոպէն ճանաչեց ձայնը, լոեց նաև Ասօի անունը, ամեն բան պարզում էր նրա համար. — Ա. Կարապետ գնացող ուխտաւորներն էին, որոնք այժմ վերադարձել են։

— Ապրօն, բայց եթէ վարդապետը մեր մասին լուր տուեց թափառական վրանաբնակներին, ինչպէս որ ըստ պառնաց այսօր, դուցէ այն ժամանակ այդ քո պատանը տակի փոելու տեղ վրադ կը փռենք, ու կը քնես յախտեան, ինչ կ'ասես։

— Ապրօի համար միենոյն է, թէ էսօր, թէ էդուց։ Քիչ առաջ լաւ ասաց մեր ընկերը — մրրկի ժամանակ տղամարդի լայն կուրծքն ու մոլորուած գնդակը եղբայրներ են։ Է՞՞ն, մենք խօմ վաղուց ենք մրրկի մէջ, թող գայ...

Մարդկային ոտնաձայներ լսուեցին բոլորովին մօտիկ, Ապրօն խօաքը կիսատ թողեց, լոեց։

— Ո՞վ ես, ձայն տուին միանգամից մի քանի հոգի։

Բլի վրայ, խաչքարի հանդէպ յայտնուեց մի պատկառելի ծերունի իր հասակի բոլոր վայելզութեամբ, գըլ խաբաց, ճերմակ մազերն ու փառայել միբուքը լուսնի շողերով արծաթափայլ հովհարւում էին գիշերային քամու առաջ, և նա լուռ քայլում էր դանդաղութեամբ, ասես մի ծանր բեռի տակ ճնշուած, կամ մի անհնարին գաղտնիք իր սրտում։ Ապա նա կանգ առաւ, նայում էր հսկայ թեստարած խաչքարին, ուխտաւորնե-

րի շփոթուած խմբին և կամ դէպի վեր՝ կարմրատակած լուսնին։ Նա կարծեա մի սպին լինէր, որ գերեզմաններից դուրս էր ընկել ուշ գիշերով աստղերի հետ փըս-  
փսալու համար, կամ ինքը Մրրկի սուրբը։

— Ո՞վ ես, կրկին ձայն տուին ամենքը սուքի ելնե-  
լով և իրար անցած։

— Զեզ պէս մէկը, խօսեց խորհրդաւոր անծանօթը. —  
անտուն ու անտէր, որ էլ գլուխ գնելու տեղ չ'ունի աշ-  
խարհում և որ եկել է Մրրկի սրբին հարցնելու, թէ  
ինչնու այսպէս, ումն է հարկաւոր, որ մի ծերունի իր  
մաշուած ոսկորները քաշ տայ դռնէ դուռ, դողայ խա-  
ւարի մէջ և իր տանջուած գլուխը գնելու տեղ չը  
գտնի. Եկայ բաղրաքելու սրբին, բայց դուք ասացիք, թէ  
նա էլ չի դայ, էլ չի դայ... Կոյսն ասում էր, թէ նա  
կը դայ, կը դայ... որի՞դ հաւատանք, ով է ճշմարիսն  
ասում... վաղուց, շատ վաղուց է, որ միշտ այս-  
պէս է եղել, թէ երկնքում, թէ երկրի վրայ խեղճե-  
րը դատ ու արդարութիւն վնարեցին ու չը գտան, և  
թափառում են անտէր անտիրական, էլի վնարում են,  
իսկ մըրթիկը չորս կողմից մօտենում է օր-աւուր...»

— Ո՞վ ես, ծերունի, ասա վերջապէս, խօսեց գըլ-  
խաւորը, ինչ կարող ենք անել քեզ համար։

— Ոչինչ, ոչինչ չեք կարող անել... Ջրաղացը տեսա՞ք...»

— Օ՛, իմ խեղճ բարեկամ, այդ գնու ես, ծեր ջը-  
րաղացպանը... ով աւերեց քո բունը։

— Ճակատագիրը, չէ դուք ասացիք, որ ջրվէժն իմ  
ջրաղացի ճակատագիրն է, եկաւ ու քանդեց, այժմ  
փնտրում եմ իմ ճակատագիրը։

— Գապէ ամի, ցուրտ է այստեղ, լաւ չէ գիւղը  
գնաս։

— Գու ես, Ապրօ... հա, դու էլ անտուն ես, իրա-  
ւունկը ունիս այստեղ լինել. Լաւը գնու ես անում...  
բայց իմ աեղն այստեղ չէ. դէհ, մնաք բարի, բարեկամ-  
ներ, հալածուած ու մերժուածներ եք, բայց էլի մի  
նզովէք այս աշխարհը, որի վրայ լուսինն էլ արիսնէ

ցովեր է թափում։ Խեղճերի, անճարների երկիր է այս, վաղուց հետէ նզովուած, հին մըրթիները շատ են ծեծել, լալկանները շատ-շատ են այստեղ, ժպիտ չը կայ։ Թո՞ղ Աստուած գարձեալ ձեր ուխտն ընդունելի անի... իմ բեռը մենակ իմն է, ես մենակ կը տանեմ... մնաք բարի, այժմ ես կերթամ գլուխս դնելու մի տեղ ճարելու, որպէսզի յաւիտեան հանգստանամ, թէ այստեղ չը լինի, ջրաղացիս յետեռում մի մեծ վիճ կայ, մնաք բարի։

Ծերունին մէկ էլ նայեց խաչքարին, գլուխն օրօրեց վհատուած, ձեռքերը վերև բարձրացրեց, մի բան մրմնջաց, ապա յետ գարձաւ և նոյն դանդաղ, հանդիսաւոր քայլուածքով սկսեց ցած իջնել բլրից ինչպէս մի մարգարէ, որ իր մենաւոր անկիւնից ցած էր գնում՝ աշխարհին մեծ ճշմարտութիւն առելու։

Մի առ ժամանակ գեռ հեռուում երեսում էր ծերունու հոյակապ հասակը, ծերմակ մազերը հողմահարւում, փայլվըլում էին լուսնի շողերի տակ, ապա նա ծածկուեց ժայռերի յետեռում, և կամաց-կամաց ոտնաձայնն էլ մեռաւ հեռաւորութեան մէջ։ Շուտրած ուխտաւորները գեռ շարունակում էին նայել նրա յետերից դէպի այն ժայռերը, որոնք ծածկեցին ծերունու յուզիչ պատկերը, նայում էին և կարծես չը գիտէին վազել, յե՞տ բերել նրան իրանց մօտ, թէ թողնել, որ հետեւի իր ճակատագրին։ Ծերունու յայտնուելն ու հեռանալն այնքան անսպասելի, այնպէս յանկարծակի եղաւ, որ ամենքին շփոթեց։

Լուռ էին ու մտազբաղ։

## XXI

Սուրբ Խաչի կիրակնամուտ երեկոն էր։ Նունու ֆարն ու իր փոքրիկ նուշիկը լուռ կծկուել էին թանրի վրայ, բայց իւրաքանչիւրն իր առանձին խոհերն ունէր։ Աղջիկը մտածում էր վաղուայ տօնի մասին։ Ցասման

ժամ էր, ասում էին՝ պատարագ է լինելու, դըսում թափօր, այդ բոլորը փոքրիկ աղջիկը չէր հասկանում, այս պատճառով վազուայ օրը նրա համար դարձել էր մի գրաւիչ խորհրդաւորութիւն, նա երեւակայում էր առնուազն, որ զատկի ճրագալոյցի պէս ժամում շատ մոմեր կը վառուեն, տէրտէրն ու տիրացուները ճոխ շորեր կը հագնեն, և յետոյ երեկի մի բան էլ աւելի՛ Ընկերուհիները բոլորը գնալու էին, այդ նա գիտէր, ինքն էլ կ'ուզէր գնալ, բայց չէր իմանում ինչպէս ասել մօրը, որ չը վշտանայ: Երեխաները մի քնքոյլ մտահոգութիւն ունին ծնողների համար նրանց վշտի, դըսբաղդութեան ժամանակ ։ Նարունակ մօր մօտ, ականջը նրա անվերջ ախուվախերին, աղջիկը մօրը միմիթարելու համար իր հնազանգութիւնը հասցըել էր կատարեալ ինքնամուացութեան, այդ փոքրիկ սիրտն ապրում էր ասես միմիայն այդ վշտահար պառաւին միմիթարելու համար: Նունուֆարը վաղնւց, նողերի մահից յետոյ էլ ոտքը եկեղեցի չէր գնում, նոյն իսկ աշխատում էր փողոցում չերեալ, նա միշտ վախենում էր, թէ որդումասին գրառում մի վատ բան կը լսի, անէծք կամ բօթ: Այժմ նուշիկը մտածում էր՝ ասել, թէ չ'ասել մօրը, որ իրան եկեղեցի տանի:

Մայն էլ մտածում էր Գոպէի ջրաղացի անցքը մասին: Առաւօտը վաղ գիւղում լուր տարածուեց, թէ շարագործ մարդիկ, երեկի էլի նրանկը, որոնք գիւղում այնքան դէզեր այրեցին, քանդել են թմբերը և Գոպէի ջրաղացը ջրերի բերանը տուել: Հաւատացնում էին, որ գժբաղդ ծերունին էլ թաղուել է աւերակների տակ, միայն զարմանալին այն էր, որ նրա գիտկը գեռ ոչ ոք չէր տեսել: Ամբողջ օրն այդ փոքրիկ փոշոտ ջրաղացի այն ալեզարդ պատկառելի ծերունու պատկերը նունուֆարի աչքից չէր հեռանում: Եւ դա իր պատճառն ունէր, այդ տխուր անցքը յիշեցնում էր Ասօին, իր վարանդի զաւակին, յիշեցնում էր վատարաղդ ։ Նողերի

Դարհուրելի մահը, իր օջաղի վրայ թափուած արիւնը, իր անտէրութիւնը, իր խեղճութիւնը:

—Մայրիկ, էդուց ես էլ կը դամքեզ հետ,

Նունուֆարը թողեց իր մաքերը և նայեց աղջկան, որ մանկական պարզ խորամանկութեամբ մատնում էր իր գաղտնիքը:

—Ո՞ւր, Շուշիկ ջան, հարցրեց մայրը չը հասկա՞նալու տալով:

—Ժամ, «ցասումը» տեսնելու, էդուց ժամում ցասում պէտք է անեն, չէ, մայրիկ, սիրուն կը լինի:

—Ո՞ւ, ցասումի տէրը մեռնի, բալա ջան, ես չեմ գնում ժամ, ցասումը չեմ ուզում:

Փոքրիկ աղջկայ փորձն անյաջող անցաւ, այդ ցասումը, այդ խորհրդաւոր բանը նրան այնպէս գրաւում էր, և մայրը պիտի զրկէր նրան այդ հաճոյքից:

—Ամենքը գնում են ցասումին թամաշա, մումը ուաց նա քիչ յետոյ լացակումած ու գլուխը քարշ ձգեց:

Մայրը չը լսեց կամ չը լսելու տուեց:

Դարձեալ լուսութիւն տիրեց խրճիթում, և նրանցից իւրաքանչիւրը շարունակեց իր մաքերը. Շուշիկը «ցասումով» էր զբաղուած, իսկ մայրն իր զաւակի ճակառագրով:

Դուռը ճռռալով կամացուկ բացուեց, շէմքի վրայ յայտնուեց մէկը. Նունուֆարը գլուխը բարձրացրեց վախեցած ու շփոթուած. Ասօն էր...

—Ախպէր ջան, ճաց Շուշիկը գէպի նա վազելով, մայրը յուզմունքից տեղումը քարացաւ մնաց, որդին հասաւ և նրա պարանոցով ընկաւ հեկեկալով:

—Ներիր, իմ խեղճ մարէ, ներիր ինձ...

—Քեզ մատաղ մարէն, Ասօ ջան... զլսովդ պտոյտ գամի, բալա ջան... կոխած հողերիդ էլ մատաղ, զարիբ բալա... ուր էիր, որ չոլերը, որ ձորերը, ինչի՞ էսպէս արիր, ձեռքս չոր գետինը, թաց աչքս դրանը...

— Ներիր, ներիր, մարէ, դարդ ունիմ, դարդ հազար  
ծովի չափ։

— Ա՛խ, քոռանամ ես, էլի դարդ... ծովարինը  
տունս բռնեց, բալա ջան, էրուած սրտերի մորմոքը, հաշ-  
զար բերնից թափուած անէծքը ու ամպ կապին օջա-  
ղիս վրայ, էլի դարդ... աւարական ջրերը խմեցիր, չու-  
լրն ընկար էս ու օրերին, գուլաւմի մէջ մօրդ թողիր  
անտէր՝ անտիրական, էլի դարդ... նշանածդ՝ ջահիլ-ջի-  
ւան վարդ աղջիկը քո ցաւից գլուխը մահին տուեց լճի  
մէջ ու իր արինը փռեց քո ճանապարհին, հայրը՝ ջր-  
բառար նաւօն գիշեր-ցերեկ պայոյտ-պտոյտ է անում  
ջրերի վրայ, մինուճար զաւակի դարդից մահ է կան-  
չում, մէրը առաւօտից երեկոյ բայզուշի պէս կտրանը  
թառած՝ մոխիր է ցանում երկնքի երեսին, դատ ու  
դատաստան խնդրում Աստծուց, էլի դարդ... ախ, քա-  
նիսին դու դարդ եղար, որդի ջան, քանիսի մեղքը վը-  
զիդ առար, անբազդ բալա. ու բոլորն ինչի՞ համար, ես  
ամաջում եմ ասել... իմ որ մեղքի համար, ողորմած  
Աստուած, ինձ էպան ցաւ, էպան ամօթ բաժին տուիր...  
որ էր տեսել խաչ-աւետարանով նշանուած մարդը գը-  
նար ուրիշի կնկան աչք զնէր... էդ էլ դու արիր....

Եւ խօսքերը թափւում էին նունուֆարի շրթունք-  
ներից հեղեղի պէս. ամիսներով կուտուած կոկիծը և  
ամօթն էր այն, որ սրտից բղխելով փռում, ծովանում  
էր որդու առաջ։ Նա գրկել էր իր զաւակի գլուխը,  
տանջուած ու թափառական, համբուրում, գուրգուրում,  
արտառում և միենոյն ժամանակ դանդատում բաղ-  
դից, երկնքից, որդուց։ Այս վշտահար տղամարդը, իր  
յօյս ու ապաւէնը և իր ծով-ցաւերի աղբիւրն էր, իր  
ու օրը և երջանկութիւնն էր, իր կեանքը և իր մահն  
էր։ Եւ նա չը գիտէր ինչպէս վերցնել մէկն առանց  
միւսի, ինչպէս բաժանել իրարից այդ երկուսը, որ Ասօն  
այնպիսի յամառութեամբ միացրել էր իր մէջ։

Եւ դանդատում էր մայրը և վշտում էր իր ցա-  
ւոտ անկարողութեան մէջ։ Զը կար մէկը գոնէ, որին

կարողամնար անիծել այդ անարդար տեղը տառապած կիմը, որի գլխին կարողանար թափել իր կրած կոկիծի, ամօթանքի թոյնն առանց խղճահարուելու... նրա առաջ իր սրդին էր, նոյնպէս տանջուած, նոյնպէս գժբաղդ, որքան մայրը:

Ասօն գլխակոր և լռութեամբ լսեց մօր բոլոր ասածները, նա թողեց, որ այդ տանջուած կինը դուրս թափի սրտի բոլոր ցաւը, ապա քնքշութեամբ բռնեց նրա խորշոմած ձեռքը, տարրաւ իր շրթունքներին:

—Մարէ ջան, ասաց նա, ներիր ինձ իմ անցեալը, բայց ես էլ էն չեմ, քո ասած գարդից վազուց եմ ըըցկուել, եթէ իմ ցաւը մի կին լինէր, ես քո երեսը գարձեալ չէի գայ, մարէ, և իմ ձեռքով իմ գերեզմանը կը փորէի: Ներիր ինձ նողերի համար, ես կարծում էի, թէ միայն ինձ եմ զոհ բերում ուրիշներին, գուրս եկաւ, որ նողերն էլ կապուած է ինձ հետ բաղդով և գնաց այնտեղ, ուր շատերն են զնում անդառնալի կերպով: Մեր ժամանակը գարձել է մի սկ անդունդ, ուր զոհերը թափւում կուտում են իրար վրայ, տեսնենք երբ կը լցուի...

—Մառա, Մառա, ինչու չար աձքը քեզ չը դիպաւ:

—Մարէ, հաւատան սրդուդ, իմ խեղճ մարէ, վազուց, շատ վազուց ինձ համար ոչ Մառա գոյութիւն ունի, ոչ նողեր, նրանք երկուսն էլ անդառնալի կերպով չքացել են իմ մտքից ու սրտից, և նրանց տեղը բռնել է մի ուրիշը—սարսափելի և գեղեցիկ միաժամանակ:

—Ո՞վ է, սրդի, հիմայ ծվ է քո գարդի աղբիւրը:

Մայրը չէր հասկանում որդուն:

—Կին չէ, մարէ, այլ մի ուրիշ բան, ահաւոր և գըրաւիչ... գու ինձ ասացիր, որ ես գեղեցիկն ու արդարը սիրեմ. հոգիս անտառներում մոլորուած ճամբորդի պէս շատ թափառեց, մինչև գտաւ, գու ասացիր, մարէ, քեզնից սովորեցի: Մաղիկը ծաղկից է սիրուն, սարը՝ սարից, ձորը՝ ձորից, կինը՝ կնոջից, կայ մի ուրիշ բան,

որ այս բոլորից էլ սիրուն է... Եթէ մեռնիմ, մարէ, դարձ  
ձեալ մի լար:

—Անիծում են, որդի, անիծում են, ախ մայրերի  
անէծքը, ես գախենում եմ, ես դողում եմ. օջաղիս վր-  
բայի արիւնք...

—Դու միայն մի անիծիր, ինձ բաւական է...

—Պապանձուեմ, պապանձուեմ:

—Այնքան մայրեր են լալիս, մարէ ջան, այնքան  
հայրեր սարսափից խելագար, այնքան զաւակներ ան-  
տէր մորմոքալիս: Մեր ժամանակի ոև վիճը դեռ չի  
լցուել, զոհեր, զոհեր, Շողերն էլ մէկը նրանցից:

—Խեղճ Շողեր, խեղճ ջիւան, ախ Ասօ:

—Դարդ կայ փոքրիկ, դարդ կայ ահագին, կուծքս  
քանդեցի իմ ձեռքով, դէն ձգեցի փոքր դարգը, այժմ  
այնաեղ մի դարդ է բուն դրել հազար ծովի շափ:  
Երեխայ էի պստիկ դարդի առաջ, շատ ապրեցի, հոկայ  
ցաւից էլ չեմ դողում:

—Ցափ, դարդի տէրը մեռնի, արարաշխարհի մէջ  
աչքը մենակ քեղ տեսաւ:

—Արարաշխարհի հէնց ցաւի բուն է, մարէ:

—Աշխարհի դարդը խօօ բոլորը քեղ չեն տուած,  
որդի. տան ու օջաղի տէր ես, ցանք ու հանդի տէր  
ես, աշունը դուռը կոխեց, ձմեռը յետեկից է դալիս.  
ամենն իրանց դործին են...

—Մարէ, այդ մնա, հաց ունիս տանը:

—Ա՛խ, քոռանայ մէրդ, չեմ էլ մտածում, որ քաղ-  
ցած կը լինեա. ցնդուել եմ, ցնդուել:

—Ուտելու ժամանակ չունիմ, մարէ:

—Ելի...

—Հա, գնում եմ, մարէ, ճանապարհի վրայ եմ:

—Ասօ ջան, խեղճ եմ, անտէրանտիլական, պա-  
ռաւ, աչքիս լոյսը պակսած, տես քոյրդ, թէ ինձ չես  
խղճում, նրան խղճաւ: Մայր ու աղջիկ հեկեկացին:

—Մարէ ջան, կը դամ, կը դամ յետոյ...

—Ուր, որդի, գոնէ տեղդ ասա, որ էս սեւաւոր

որբի ձեռքից բռնեմ, աշխարհէ աշխարհ հաց մուրալով  
քո յետեից գամ:

—կը գամ, կը գամ, կը կնում էր Ասօն հացերը  
կապելով:

—Ախր որդի, ինչի ես գնում, ում համար ես գը-  
նում:

—Լացողների համար, մարէ, լացողների:

—իմ արցունքը... քուացած աչքիցս թափւում է...  
ապա մօր արցունքը... թողնում է մօր արցունքը...

—Քո արցունքը թող ցող գառնայ, մարէ ջան, զա-  
ւակիդ ցաւոտ գլխին, քո արցունքը սուրբ է, իմ խեղճ  
մէրիկ, բայց ես պէտք է գնամ...

—Ասօն, Ասօն:

—Մնաս բարի, մարէ, մնաս բարի, քոյրիկ ջան, կը  
գամ, կը գամ:

Ասօն գուրս գալով գոնից՝ շտապով կորաւ խաւարի  
մէջ։ Մայրն ու քոյրը նրա յետեից հեծկլալով գուրս  
եկան բակը, կանգ առան խաւարի մէջ անտէր  
ու մենակ, գեռ երկար նայում էին դէպի այն կողմը,  
ուր ծածկուեց Ասօն, լսում էին նրա կամաց-կամաց  
հեռացող ոտնաձայնը, երբ ամեն բան լռեց, կողք կող-  
քի սղմուած՝ յետ գարձան տուն, գուռը փակեցին ու  
նորից կծկուեցին իրանց տեղերում։ նրանք գարձեալ  
մենակ էին։

—Էլի՛ մենակ մնացինք:

—Հա՛, բալա ջան, էլի մենակ ենք, քնիր, քնիր,  
մեղ մնաց Աստուած։

Ուշ գիշեր էր. փոքրիկ աղջիկը կամաց-կամաց  
նզգեց ու քուն մտաւ, իսկ նունուփարը գեռ ծնկները  
գրկած՝ օրօրւում էր ճրագի պլազմն լրյսի առաջ և մը-  
տածում էր այն մութ անյայտի մասին, որի մէջ գնաց  
կորաւ իր զաւակը, այն ծով գարդի մասին, որ բռնել  
էր իր Ասօի սիրտը ինչեր ասաց, ուր գնաց և ինչու...  
նունուփարը հասկանալ չէր կարողանում, և սիրտը ճը-  
մլում, քամւում էր մի անորոշ խեղդող կասկածից,

և հոգին, մայրական տանջուած, ալեկոծ հոգին չեր կարողանում կը ել իր վրայ այդ խորհրդաւոր անյայտի ահագին ծանրութիւնը:

—«Դարդ կայ փոքրիկ, դարդ կայ ահագին», ասում էր Ասօն, միթէ իմ դարդից էլ մեծը կայ, Տէր Աստուած. ասում էր, հալբաթ կայ... Ասօն էր ասում... սև, վէրան ժամանակներ, ինչ էք պատրաստում մեր գլխին, մրմնջում էին նրա շրթունքները:

Եւ մայրը շարունակում էր օրօրել իր ծեր ու յոդանած գլուխը, և նրա հետ միասին սև մաքերն օրօրուում, խօսում էին նրա ականջին:

—«Սև փոսը գեռ չի լցուելը... այն ինչ փոս է, որտեղ է այդ անիրաւ փոսը. Ասօ, Ասօ, ախ թառլան որդի, զնալուց առաջ ինչի գոնէ սեւաւոր մօրդ էն «փոսի» մի անկիւնը չը ձգեցիր, կամ ինչո՞ւ...

Նունուֆարը ցնցուեց ու գունատուեց, չները գիւղում միահամուռ ձայնով ոռնալ սկսեցին, շարագուշակ ու այլանդակ: Հեռու, հեռու լեռներից կ'ասես սարսափելի ձայներ էին գալիս, որոտ, պայթիւն, հարայ, ինչ որ մի տեղ, ամայի լեռներում կատարւում էր մի ահաւոր բան: Նստած տեղում նունուֆարը դոզում էր իր զաւակի համար:

—Տէր, Դու փրկես, Դու հասնես, ողորմած Աստուած:

Զայները սաստկացան, հրացաններ էին պայթում: Չների ոռնոցը դարձաւ խլացուցիչ. գիւղն էլ կծկուեց, դռներն աւելի պինդ փակուեցին, թէ ճրագներ կային՝ մարեցին, գիւղը մեռնում էր երկիւղից խաւարի մէջ, մէկ նունուֆարի ճրագը գեռ պլազում էր:

—Տէր, Դու փրկես, մրմնջում էին նրա շրթունքները:

Նրան թւում էր, թէ այդ բոլոր ձայները գալիս են այն մութ, ճնշող անյայտից, որով պաշարուած է իր հոգին, գէպի որը գնաց իր որդին: Մահուան սարսա-

մի ձայնն էր դալիս այնտեղից, այն մութ, խորհրդաւոր անյայտն էր մոնչում, և որդին գնաց...  
—Տէր, Դու վրկես:

Ա. ԱՀԱՐՈՒԵԱՆ

(Պը շարունակուի)